Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ

Երևանի պետական համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհվել է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում: Որոշումը Նորին Սրբությանը հանձնելու համար դեկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ացելեց ԵՊՀ ռեկտոր, Գիտական խորհրդի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը՝ պրոռեկտորներ Է. Զուբարյանի, Ռ. Մաթևոսյանի, Է. Ղազարյանի, Ռ. Ծալիխաթունյանի, ԵՊՀ աստուածաբանության ֆակուլտետի դեկան Շահե արքեպս. Անճեմյանի, ԵՊՀ գիտնական քարտուղար Հ. Ավետիսյանի ուղեկցությամբ:

Որոշման մեջ ասված է. «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների և հասարակական-հայրենասիրական բեղուն գործունեության համար շնորհել պատվավոր դոկտորի կոչում»:

Վեհափառ Հայրապետն իր երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնեց որոշման կապակցությամբ՝ նշելով, որ նոր հազարամյակի շեմին առանձնակի կարևորվում է մարդկության արժեքների գնահատման, մեր երիտասարդներին հայ քրիստոնյայի ոգով դաստիարակելու խնդիրները:

Զրույցի ընթացքում Գարեգին Ա Կաթողիկոսը անդրադարձավ հանրապետության համալսարաններում քրիստոնյա երիտասարդների միություններ ստեղծելու խնդրին, որը ավելի կամրապնդի կապը Եկեղեցու և երիտասարդության միջև:

Նորին Սրբությանը պատվավոր դոկտորի դիպլոմի հանձնման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա Երևանի պետական համալսարանում: